

Խմբագրական

Հայաստանը նոր Մայիս 28-երու կարիք ունի

Մայիս 28-ին, Նիկոլ Փաշինյանի կողմից Երևանի մէջ կազմակերպել լայնածաւալ զինուորական շքերթ մը: Բնականաբար սխալ պիտի ըլլայ այդ ձեռնարկը դիտել որպէս Մայիս 28-ի ոգիին ու պատգամին յարիւր նախաձեռնութիւն: Իրականութեան մէջ, իշխող վարչակարգը կը փորձէ ազգային խորհրդանիշները վերածել քաղաքական գործիքի՝ խորհրդարանական ընտրութիւններու միջոցով մէջ առաջ մղելու համար քողարկուած օրակարգ մը, որ խորքին մէջ վերջին տարիներուն հետեւողականօրէն քանդած է հայկական ազգային մտածողութիւնը, արժեքը կազմակերպութեան ինքնիշխանութեան գաղափարը եւ Հայաստանը աւելի խոր կախուածութեան մէջ մղած արտաքին ուժերէ:

Մայիս 28-ը քաղաքական գործիք է, ոչ ալ սոսկ յիշատակ: Ան քաղաքական պատգամ է՝ ուղղուած այսօրուան Հայաստանին: 1918-ի անկախութեան հռչակումը տեղի ունեցաւ այնպիսի պայմաններու մէջ, ուր քաղաքական իրապաշտութեան բոլոր «տրամաբանական» հաշիւները կը թելադրէին յանձնուել: Յեղասպանութենէն հազիւ փրկուած, սովահար եւ շրջափակուած ժողովուրդ մը, մեծ տէրութիւններու շահերուն միջեւ ճգնաժամ, ըստ դասական ուժային քաղաքականութեան՝ պէտք է հրաժարէր ինքնուրոյն պետականութենէ: Այդ պայմաններուն մէջ հայ քաղաքական միտքը՝ գլխաւորաբար Հայ Յեղափոխական Դաշնակցութեան առաջնորդութեամբ, չընտրեց հպատակութեան ճանապարհը: Ան ընտրեց պետականութիւնը՝ որպէս գոյութեան միակ երաշխիք: Առաջին Հանրապետութիւնը դարձաւ ներկայ Հայաստանի տարածքային, իրաւական եւ քաղաքական հիմքը: Առանց այդ սերունդի կամքին, այսօր հայկական պետականութիւն թերեւս գոյութիւն իսկ չունենար:

Սակայն Մայիս 28-ի պատգամը այսօր աւելի խոր իմաստ ունի, որովհետեւ ներկայ վտանգը միայն սահմաններուն վրայ չէ: Հայաստանի դէմ այսօր կը տարուի աւելի համակարգուած եւ աւելի վտանգաւոր պայքար մը՝ ոչ միայն տարածքներ խլելու, այլ հայ ժողովուրդի քաղաքական կամքը կազմաքանդելու համար: Կեդրոնացուած ճիգ մը կայ՝ սպաննելու ազգային օրակարգը, Հայաստանը գրկելու ինքնուրոյն աշխարհաքաղաքական մտածողութենէ եւ հայ ժողովուրդը վերածելու կառավարող, ենթակայ եւ կամազուրկ զանգուածի մը: Այս ճիգը կը զբսեղորուի ամէն մակարդակի վրայ՝ ազգային պահանջատիրութեան նսեմացումով, ինքնութեան գաղափարի թուլացմամբ, պատմական յիշողութեան արժեքը կորստով եւ պետական շահը ժամանակաւոր քաղաքական հաշիւներու ենթարկելով:


Այս իմաստով, Հայաստանը այսօր նոյնքան ճակատագրական հանգրուանի մը առջեւ կը գտնուի, որքան 1918-ին: Այն ատեն մեծ տէրութիւնները նոյնպէս պատրաստ էին Հայաստանը գոհաբերելու իրենց շահերուն համար: Բայց այդ սերունդը ունէր ազգային արժանապատուութիւն, պետական մտածողութիւն եւ կամք՝ մերժելու պարտադրուած ճակատագիրը: Անոնք հասկցած էին, որ ազգերը չեն գոյատեւեր միայն քանակով կամ դաշնակիցներով, այլ նախ եւ առաջ քաղաքական սեփական կամքով:

Ահա թէ ինչո՞ւ Մայիս 28-ը այսօր պէտք է դիտել ոչ թէ որպէս արարողակարգային տօն, այլ որպէս ազգային զիմարդութեան քաղաքական փրկիւստիայութիւն: Հայաստանը նոր Մայիս 28-երու կարիք ունի՝ նոր ղեկավարութեան մը, որ պիտի վերականգնէ ազգային օրակարգը եւ վերահաստատէ, որ հայ ժողովուրդը տակաւին ունի իր ճակատագիրը ինքնուրոյն կերպով որոշելու կամքն ու կարողութիւնը:

ԿՈՉ

Մայիս 28՝ վերածնունդի, յոյսի եւ ազգային վերակազմաւորման հրաւեր

Հայաստանի անկախութեան եւ հանրապետութեան կերտումի 108-ամեակի տօնակատարութիւններուն առիթով, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն կը վերահաստատէ իր անսակարկ յանձնառութիւնը հայկական պետականութեան, ազգային ինքնութեան եւ համահայկական իրաւունքներու պաշտպանութեան գործին: Հայաստանի Ա. հանրապետութեան կերտումը, որ ծնունդ առաւ մեր ժողովուրդի աննկուն կամքէն եւ գոյապայքարէն, դարձաւ մեր նորագոյն պատմութեան անկիւնաքարային հանգրուանը եւ հիմքը՝ այսօրուան պետական գոյութեան:



Այսօր, սակայն, մեր հայրենիքը դարձեալ կը գտնուի ճակատագրական հանգրուանի մը դիմաց: Ազգային իրաւունքներու նահանջը, Արցախի բռնի հայաթափումը, Հայաստանի ինքնիշխանութեան առջեւ ծառայած սպառնալիքները եւ մեր ազգային պահանջատիրութիւնը նսեմացնելու փորձերը կը պարտադրեն վերանորոգել մեր հաւաքական կամքն ու ազգային գիտակցութիւնը: Այս օրերուն անհրաժեշտ է ամրացնել պետական մտածողութիւնը, վերականգնանացնել հաւատքը մեր ազգային կարողութիւններուն եւ նոր սերունդներուն մէջ խորացնել հայրենատիրութեան ու պատասխանատուութեան ոգին:

Այս առիթով, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն կը հրաւիրէ համայն հայութիւնը՝ համախմբուելու «Յանուն ինքնութեան եւ պետականութեան» պատգամին շուրջ, մասնակցելով իրենց ապրած շրջաններու Հայ կեդրոններուն կազմակերպած ձեռնարկներուն, արժեւորելու մեր անկախ պետականութիւնը եւ վերանորոգ վճռակամութեամբ շարունակելու ազգային պայքարը: Մայիս 28-ի եւ Հայաստանի անկախութեան խորհուրդը պէտք է դառնան ոչ միայն յիշատակութեան օրեր, այլեւ վերածնունդի, յոյսի եւ ազգային վերակազմաւորման հրաւեր: **ՀՅԴ ԳԱՆԱՏԱՅԻ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ**

Փօլ Սէն Փիեռ Փլամնտոն վերահաստատեց իր աջակցութիւնը Սուրբ Յակոբ ազգային վարժարանին եւ Քեպէզի հայ համայնքին



Կարդալ էջ 8

BEFORE YOU REPLACE THEM

REJUVENATE THEM.

Don't buy new when your hearing aids can sound new again.

NEVER WORN HEARING AIDS BEFORE? NOT SURE WHERE TO START?

If your hearing isn't as clear as it used to be, or you're exploring hearing aids for the first time, we offer free hearing tests to assess your hearing. Our team provides clear, professional guidance so you feel confident and supported from your first appointment.

✔

REVIVE
Deep Clean & Restore

✔

RENEW
Calibrate & Optimize

✔

REJUVENATE
Hear Like New



hearing aid source
hearing instrument specialists

hearingaidsource.ca

hello@hearingaidsource.ca



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղին աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Օտար երկրի հովերուն դէմ մոլեգին՝ հայ դպրութեան քահանայները մշտապես

Օտար աշխարհի հզոր հոսանքների, ճուրման անտեսանելի վտանգների եւ ժամանակի անողոք փոփոխութիւնների դիմաց՝ սփիւռքահայ դպրոցը շարունակում է մնալ մեր ինքնութեան, մեր ազգային ոգու անառիկ բերքը: Յեղասպանութիւնից մագապուրծ հայութիւնը՝ կորցնելով հայրենիք, տուն ու ընտանիք, նոյնիսկ ամենազաւթան պայմաններում չհրաժարուեց կրթութիւնից ու ազգային ոգին պահպանելու առաքելութիւնից: Որբանոցների, գաղթական ճամբարների եւ օտար ափերի ծանր իրականութեան մէջ հայութիւնը նախ եկեղեցի ու դպրոց հիմնեց՝ հասկանալով, որ եթէ պահպանուի մեր հաւատքը, մեր լեզուն ու դպրոցը, ուրեմն կ'ապրի նաեւ ազգը:

Հենց այդ հաւատով ստեղծուեցին սփիւռքի հայկական դպրոցները, որտեղ սերունդներ շարունակ փոխանցուեց ազգային ինքնութեան եւ հայրենիքի նկատմամբ պատասխանատուութիւնը: Ուստի «Օտար երկրի հովերուն դէմ մոլեգին» Հայ դպրութեան ջանք պահանջ մշտապես պատգամը դարձրին պայքար անցած հայ ժողովրդի գոյատեւան ու հայ մնալու ուխտն է, հայրենիքից հեռու ազգային ոգին անմար պահելու սրբազան պարտաւորութիւնը:

Երբ կարգում էի գանատահայ համայնքի արխիւային արձանագրութիւնները, ամենալուրջ եւ խորը տպւեցող դրուագներից մէկն այն էր, որ ցեղասպանութեան արհաւիրքից յետոյ Գանատահայ հասած, գոյութիւնը մեծ դժուարութեամբ պահող փոքրամասն հայութեան առաջնային երազանքն ու նպատակը հայկական դպրոց ունենալն էր: Նրանք չունէին ոչ միայն բաւարար միջոցներ, այլ առհասարակ միջոցներ, չունէին որեւէ դրամական հնարաւորութիւն, սակայն ունէին ազգային գիտակցութիւն եւ սերունդը հայ պահելու կամք: Հայ մնալու միակ ճանապարհի համար, որոշում են իրենց հիմնական աշխատանքից յետոյ, գիշերաշին արտաժամեայ ծանր բանուորական աշխատանք կատարել, որից հաւաքած գումարով էլ հիմնեն հայկական դպրոց: Եւ հիմնեցին:

Այսօր արդէն համայնքն ունի հպարտութեամբ ներկայացուող իր դպրոցները, եւ ամենակարեւորը՝ այդ նոյն գիտակցութիւնը չի ընդհատուել, սերունդները շարունակել են նոյն համոզումով ու նուիրումով, ազգային նոյն պատասխանատուութեամբ:

Այս պատմական ընթացքը բնական կերպով կապուած է նաեւ ՀՕՄ-ի Հայ Օգնութեան Միութեան հետ, որը տարիներ շարունակ իր առաքելութեամբ դարձել է սփիւռքի շարունակական կապը՝ օտար ափերում ցրուած հայութեանը նոյն ազգային գգացողութեան մէջ պահելով՝ սրտէ սիրտ փոխանցուող նուիրումով, հոգատարութեամբ:

Հենց այդ նոյն արժէքային շղթայի շարունակութիւնն է Գանատայի ՀՕՄ-ի «Սրտէ Սիրտ» խմբակցութիւնը:

Եթէ առաջին սերունդները ծանր ֆիզիքական աշխատանքով հիմք դրեցին հայկական դպրոցին՝ որպէս գոյութեան ու ինքնութեան պահպանման միջոց, ապա այսօր ՀՕՄ-ի նման նախաձեռնութիւնները այդ նոյն հիմքի շարունակութիւնն են՝ արդէն աւելի կազմակերպուած եւ համակարգուած ձեւով:


Այսինքն՝ այն, ինչ սկսուեց որպէս գոյատեւման պայքար, այսօր շարունակուած է որպէս գիտակցուած ազգային պատասխանատուութիւն՝ սրտից սիրտ փոխանցուող կրթութեան միջոցով:

Եւ որպէսզի օտար երկրի հովերուն դէմ մոլեգին՝ հայ դպրութեան ջանք մնայ մշտապես, այն պէտք է շարունակաբար սնուի մեր միասնական կամքով, հաւատով եւ մեր լուծման բերելու պատրաստակամութեամբ՝ սերունդից սերունդ անխափան փոխանցելով հայ մնալու անմար լոյսը:

Մեր պարտքը նախորդ սերունդների նուիրումի եւ յաջորդ սերունդների հայ մնալու ապագայի հանդէպ՝ այսօր մեր լուծման բերելն է:

<https://www.canadahelps.org/en/dn/39733>

ԱՐՄԻՆԷ ՄՈՒՔՈՅԵԱՆ



Մոնթրէալի մէջ տեղի ունեցաւ Համազգայինի «Անի» Պարարուեստի Ուսումնարանի խրախուսիչ ելոյթը



Շաբաթ, 16 մայիս 2026-ին, յետմիջօրէի ժամը 3:00-ին եւ ապա 6:00-ին, «Ապագան պայծառ է» երկու ելոյթներով հանդէս եկաւ Համազգայինի Քեպէզի «Սանահին» մասնաճիւղի «Անի» Պարարուեստի Ուսումնարանի 2-10-րդ դասարաններու պարողներու խումբերը, գեղարուեստական ղեկավարութեամբ Վերոնիկա Զամալեանի:

Ելոյթներուն բացումը կատարուեցաւ 5-6-րդ դասարաններու խումբին վարժութիւններով, որմէ ետք բացման խօսքով հանդէս եկաւ Պարարուեստի յանձնախումբի անդամ Կարին Սարգիսեան, որ իր խօսքին մէջ յայտնեց, թէ այս տարի «Անի» պարախումբի պարողներուն թիւը հասած է 230-ի, ինչ որ մեծ հպարտութիւն կ'առթէ եւ համայնքին, եւ ծնողներուն եւ թէ Համազգայինին, որ տարիներ շարունակ հաւատարմութեամբ է, որ «Մշակոյթը միայն անցեալ չէ, այլ՝ ապագայ, եւ այդ ապագան մեր աչքերուն առջեւն է՝ գունաւոր տարազներով, անկեղծ ժպիտներով եւ վստահ քայլերով», ըսաւ ան:

Ապա ելոյթները շարունակուեցան հետեւեալ հերթականութեամբ. «Հանինա»՝ 2-րդ դասարան, «Գիտնո՞ւ Վեր վերի»՝ 3-րդ դասարան, «Ազգագրական պար»՝ 4-րդ դասարան, «Փայլանջ»՝ 5-6-րդ դասարաններ, «Խշխշուն աղջիկներ»՝ 7-8-րդ դասարաններու աղջիկներ, «Ազգագրական պար»՝ 9-10-րդ դասարաններ, «Քոչարի»՝ 2-րդ դասարան, «Ժողովրդական պար»՝ 3-րդ դասարան, «Աւազանի շուրջ պար»՝ 4-րդ դասարան, «Քոչարի»՝ 5-6-րդ դասարաններ, «Մաղկեփունջ»՝ 7-8-րդ դասարաններ, «Զանգեզուրի պար»՝ 9-10-րդ դասարաններ, որմէ ետք յաղթական մուտքով պարախումբի բոլոր դասարանները կատարեցին խոնարհումը:

Նշենք, որ նոյն օրը առաւօտուն ելոյթ ունեցած էին նաեւ Կոկոն, Մաղիկ եւ Առաջին դասարաններու պարողները, վարժութիւններով, «Մափ պար», «Հայկական պար», «Ժողովրդական խաղ պար», «Փոփոքի», «Մաղկածորի», «Թամզարա», «Հայաստան ջան» եւ «Մենք ենք մեր սարերը» պարերով, նոյնպէս գեղարուեստական ղեկավարութեամբ Վերոնիկա Զամալեանի, որուն անդրանիկ ելոյթներն էին օրուան երեք բարեյաջող ելոյթները:

Աւարտին շնորհակալական խօսքով հանդէս եկաւ «Սանահին» մասնաճիւղի ատենապետ Ռուբէն Սարգիսեան, խօսքը ուղղելով նախ՝ պարուսոյցին, իր անասման համբարներին ու տարած անխոնջ աշխատանքին համար, յանձնախումբին եւ կամաւորներուն, որոնք ծնողական հոգատարութեամբ հսկած ու աջակցած էին ելոյթներուն յաջողութեամբ պատկուելուն, ապա բոլոր ծնողներուն, որոնք անսակարկ կերպով կը վստահին իրենց զաւակները մշակոյթի դարբնաց Համազգայինին:

Հարկ է նշել, որ փոքրերը իրենց շարժումներով, գեղեցիկ տարազներով, ժպիտով եւ աշխուժութեամբ գուարճալի պահեր ստեղծեցին, ինչպէս նաեւ բոլոր պարերը յոյս եւ ուրախութիւն ներշնչեցին ներկաներուն: Համայնքի մատուց սերունդին այս խանդավառութեամբ, լրջութեամբ եւ պատասխանատուութեամբ բեմ բարձրացնելն ու նման պատկառելի թիւով երեխաներ եւ պարմաններ համախմբելն ու հայկական մշակոյթին հետ առնչելը իրապէս պայծառ ապագայի յուսադրիչ խրախուսումն է եւ կենդանի փաստը Համազգայինի առաքելութեան ու յանձնարարութեան:

ՍՈՒՆԱ ԹԻԹԻՉԵԱՆ ԿԷՏԻԿԵԱՆ
Լուսանկարը՝ ԼՈՒՍԻՆ ԽՈՒՇԵԱՆԻ

Մոնթրէալի մէջ տեղի ունեցաւ Համազգայինի «Քնար» երգչախումբի պանծալի համերգը



Շաբաթ, 23 մայիս 2026-ին, երեկոյան ժամը 7:30-ին, Collège Beaubois-ի հանդիսարահին մէջ տեղի ունեցաւ Համազգայինի Քեպէզի «Սանահին» մասնաճիւղի «Քնար» երգչախումբի տարեկան համերգը, նուիրուած մեծանուն երգահան Խաչատուր Աւետիսեանի ծննդեան 100-ամեակին, խմբավարութեամբ Սարգիս Պարսեմեանի, նուագակցութեամբ դաշնակահար Հուրի Մանուկեանի, կիթառահար Զոհրապ Սարգիսեանի, ջութակահար C-Perron Emilien-ի, հարուածային գործիքի նուագահար Անտոն Քեչիշեանի եւ սրնգահար Շիրազ Բենէնեանի, ներկայութեամբ Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գեղ. Տէր Բարբէն Արք. Չարեանի, Հոգ. Տէր Յակոբ Վրդ. Եագուպեանի, պատկան մարմիններու եւ ուղեկից միութիւններու ներկայացուցիչներու եւ հոծ բազմութեան:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ երգչախումբի վարչական ներկայացուցիչ Անի Գարագաշեան, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Այսօր բեմ կը բարձրանայ մեր համայնքի գեղարուեստական կեանքի կարեւոր սիւներէն մէկը՝ «Քնար» երգչախումբը, որ իր երկարամեայ նուիրումով, բարձրորակ կատարումներով եւ իր մշակութային պատասխանատուութեամբ արժանաւոր կերպով կը ներկայացնէ Համազգայինի գեղարուեստական տեսլականը: «Քնար» երգչախումբը ոչ միայն երգի միջոցով կը փոխանցէ մեր ժողովուրդի հոգեւոր ու մշակութային ժառանգութիւնը, այլ նաեւ կը մարմնաւորէ այն շարունակականութիւնը, որուն շնորհիւ մեր ազգային ինքնութիւնը կը մնայ կենդանի եւ կենսունակ», ապա աւելցուց. «Թող այս երեկոն դառնայ ողբնչման, յիշողութեան եւ ազգային հպարտութեան շարժառիթ՝ արժանաւոր կերպով ներկայացնելով մեր մեծ արուեստագէտ Խաչատուր Աւետիսեանի անզնահատելի ժառանգութիւնն ու «Քնար» երգչախումբին նուիրեալ աշխատանքը»:

Գեղարուեստական յայտադրը սկիզբ առաւ «Զան Հայաստան» խմբերգով, որմէ ետք տեղի ունեցաւ Խաչատուր Աւետիսեանի կեանքին ու գործունէութեան նուիրուած տեսերիքի ցուցադրութիւն: Համերգը շարունակուեցաւ յաջորդաբար «Իմ եղէք», «Տաւիղ», «Որտեղ գտնեմ քեզ», «Կունկներ», «Գարնանային», «Մաղկած Բայկնի» եւ «Երեւանի ջութ» երգերով, ապա կարճ դադարէ ետք շարունակուեցաւ ելոյթը՝ «Earth song», «Better place», «Viva la vida», երգերով, որմէ ետք համոյթը հանդէս եկաւ հայկական ժողովրդական երգերու փունջով՝ «Նուպար-Նուպար», «Սարերի հովին մեռնեմ», «Հոյ իմ նազանի եարը», «Հոյ նար» եւ ժողովրդական երգերու շարանով: Հանդիսատեսներուն բուռն ծափողոյցներուն եւ փափաքին ընդառաջելով, երգչախումբը կրկին «Որտեղ գտնեմ քեզ»-ի երգեցողութիւնը:

Ելոյթի աւարտին վարժութեան ատենապետ Ռուբէն Սարգիսեան հանդէս եկաւ շնորհակալական խօսքով, որմէ ետք թեմիս առաջնորդ Գեղ. Տէր Բարբէն Արք. Չարեան փոխանցեց իր գնահատական խօսքը, ապա երգչախումբին ուղղելով իր խօսքը՝ ըսաւ. «Շարունակեցէ՛ք ձեր այս սրբազան առաքելութիւնը, որովհետեւ այս ազգակներով է, որ մենք կը մնանք հայ եւ մեր ինքնութիւնը դիմագիծով կը շարունակենք մեր գոյերթը» եւ «Պահպանիչ»-ով փակեց ձեռնարկը:

Նշենք, որ ուշագրաւ էր երգչախումբին բարձրորակ ու ողբնչոյ կատարումը, խմբավարին մասնագիտական վերաբերումն ու վարակիչ եռանդը՝ խումբի անդամներուն ու հանդիսատեսին, նուագածուներուն որակեալ եւ համարկեալ ձայնակցութիւնը, բուլիսներու ետին կամաւոր աշխատողներուն ներգաշնակ գործակցութիւնը, վարչութեան եւ յանձնարարութեան անխոնջ աշխատանքը եւ հանդիսատեսին գնահատումը այս բոլորին:

ՍՈՒՆԱ ԹԻԹԻՉԵԱՆ ԿԷՏԻԿԵԱՆ

Թրամփի միջանցքը Հարաւային Կովկասի մէջ՝ ինը ամիս ետք. անորոշութիւններ եւ խոցելիութիւններ

8 օգոստոս 2025-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանն ու Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը Սպիտակ տան մէջ ստորագրեցին միացեալ հռչակագիր մը՝ հիմնելով «Խաղաղութեան եւ բարգաւաճման թրամփեան ուղին» (ԹՐԻՓՓ): Համաձայնութիւնը կը նախատեսէր Հայաստանի հարաւային Միւնիքի մարզով Ատրպէյճանը իր Նախիջևանի անկլաւին կապող միջանցքի մը բացումը՝ միաժամանակ խոստանալով փոխադարձ փոխադրական օգուտներ նաեւ Հայաստանին:

Այս գաղափարը նոր չէ: Անոր արմատները կը հասնին աւելի քան մէկ դար առաջ ձեւաւորուած ատրպէյճանական-թրքական ռազմավարական ձգտումներուն, որոնց նպատակը Թուրքիոյ եւ Ատրպէյճանի միջեւ ցամաքային անխափան կապ սպառնալից էր, մինչ Հայաստան կը դիտուէր իբրեւ աշխարհագրական խոչընդոտ: Ժամանակակից փոփոխութիւնները խթանուեցաւ 9 նոյեմբեր 2020-ի դինաւարի համաձայնութեան 9-րդ կէտով: Տարիներ շարունակ բանակցութիւնները փակուղիի մէջ էին՝ վերահսկողութեան, իրաւասութեան եւ նոյնիսկ «միջանցք» բառին շուրջ տարակարծութիւններու պատճառով: ԹՐԻՓՓ-ը փորձեց շրջանցել այդ խոչընդոտը՝ պահելով հայկական սահմանային իրաւական վերահսկողութիւնը, բայց՝ ստուգումները փոխանցելով երրորդ երկրի մը ոչ պետական ընկերութեան մը:

Այս նախաձեռնութեան կարեւոր արդիւնքներէն մէկն ալ այն է, որ ան առայժմ կանխեց Ատրպէյճանի կողմէ ուժի գործադրութեամբ միջանցք պարտադրելու վտանգը: Այլեւ նախապէս բազմիցս յայտարարած էր, որ միջանցքը պիտի բացուի «անկախ Հայաստանի կամքէն»: Ամերիկեան ներգրաւուածութիւնը առայժմ յետաձգած է այդ սպառնալիքը:

Ի՞նչը համաձայնեցուցաւ, եւ ի՞նչը՝ ոչ

Ինը ամիս ետք ամէնէն ռազմարար այն է, թէ որքան քիչ հարցեր իրականութեան մէջ լուծուած են: 2026-ի յունուարին ընդունուած «ԹՐԻՓՓ-ի իրականացման շրջանակը» ստեղծեց «TRIPP Development Company»-ն՝ 74 առ հարիւր ամերիկեան եւ 26 առ հարիւր հայկական բաժնեմասերով: Այս ընկերութիւնը պէտք է կառուցէ Միւնիքին անցնող 43 քիլոմետրանոց երկաթուղային, մայրուղային, օփթիք մանրաթելային եւ ուժանիւթային ենթակառուցները՝ նախնական 49 տարւան ժամկէտով: Սակայն փաստաթուղթը չափազանց մակերեսային է. չկայ շինարարութեան յստակ ժամանակացոյց, վէճերու կարգաւորման յստակ գործիքակազմ, իսկ ամէնէն կարեւորը՝ փաստաթուղթը յատկապէս կը շեշտէ, որ Միացեալ Նահանգներուն եւ Հայաստանին համար իրաւական պարտաւորութիւններ չի ստեղծեր:

Անորոշ կը մնայ նաեւ անվտանգութեան համակարգը: Թէեւ Հայաստանը ձեւականօրէն կը պահէ իր ինքնիշխանութիւնը, սակայն առօրեայ անվտանգային գործառնայինները կրնան փոխանցուիլ ոչ պետական կապալառուներու: Սակայն Միացեալ Նահանգներ-Իրան լարուածութեան եւ Իսրայէլ-Իրան պատերազմի պայմաններուն մէջ ամերիկեան անձնակազմի տեղակայումը Իրանի սահմանին մօտ չափազանց բարդ դարձած է:

Պէտք է նաեւ նշել, որ ենթակառուցային ծրագիրներու պարագային, պետութիւնները յաճախ կը կորսնցնեն վերահսկողութիւնը ոչ թէ իրաւական հիմքերու բացակայութեան պատճառով, այլ որովհետեւ տնտեսական եւ իրաւարարական գործիքակազմերը ժամանակի ընթացքին ինքնիշխան վերահսկողութեան կիրարկումը կը դարձնեն չափազանց ծախսալից կամ քաղաքականապէս անկարելի:

Յաղթողներն ու պարտուողները

Ատրպէյճանը նախագիծին մեծագոյն շահառուն է. առանց ռազմական գործողութեան՝ ան կը ստանայ ուղիղ կապ Նախիջևանի հետ: Թուրքիան յառաջ կը տանի իր համաթրքական եւ եւրասիական հաղորդակցական ռազմավարութիւնը: Միացեալ Նահանգներն ալ կը ստանան ազդեցութեան նոր յենակէտ մը Հարաւային Կովկասին մէջ եւ նախագիծը կը ներկայացնեն իբրեւ արտաքին քաղաքական յաջողութիւն:

Հայաստանի շահերը, սակայն, պայմանական եւ անհամաչափ կը մնան: Ատրպէյճանական բեռներն ու ատրպէյճանցի ուղեւորները կը ստանան արտօնեալ տարանցում հայկական տարածքով, մինչ հայկական կողմին համար Ատրպէյճանի տարածքով համարժէք անցումի ոչ մէկ երաշխիք կայ: Երեւան «փոխադարձ օգուտ» հասկացողութիւնը կը մեկնաբանէ իբրեւ համարժէք մուտքի իրաւունք, մինչ Պաքու՝ իբրեւ ընդհանուր փոխշահակցութիւն՝ առանց պարտադիր հաւասարութեան:

Աւելի՛ն. Հայաստանի երեւմտական շահոյթներուն մասին կը խօսուի միայն ընդհանուր ձեւակերպումներով՝ 26 առ հարիւր բաժնեմաս, մաքսային տուրքեր եւ տարանցիկ եկամուտներ, բայց թիւեր չեն նշուիր: Հայաստանի արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանն իսկ յայտարարած է, որ եթէ Գիւմրի տանող երկաթուղային հատուածը չներառուի նախագիծին մէջ, ԹՐԻՓՓ-ը իր իմաստը պիտի կորսնցնէ Հայաստանի համար:

Կառուցուածքային խոցելիութիւններ

Նախագիծը կրնայ ձախող իրաւունք հիմնական խոցելիութիւններու պատճառով: Առաջինը՝ Հայաստանի երկաթուղային համակարգը տակաւին 2008-էն ի վեր կը գտնուի ռուսական «Հարակողմակաւեան երկաթուղի»-ի՝ «Ռուսական երկաթուղիներ» ընկերութեան դուստր կառուցին, 30-ամեայ մենաշնորհային կառավարման ներքեւ: Ռուսիան այժմ տնտեսական ծանր ճգնաժամի մէջ է, իսկ ներդրումային պարտաւորութիւններուն մեծ մասը չէ իրականացուած: Փաշինեան պահանջած է արագացնել խորհրդային շրջանի երկաթուղային հատուածի վերականգնումը եւ սպառնացած՝ զայն դուրս բերել ռուսական մենաշնորհային համակարգէն, եթէ յառաջընթաց չըլլայ:

Երկրորդ խոցելիութիւնը խաղաղութեան պայմանագիրի բացակայութիւնն է: Թէեւ փաստաթուղթը նախատորագրուած է, սակայն ան տակաւին վերջնականապէս

Կարճ կտրուկ. «Արեւմտեան Ատրպէյճան»-ի խօսույթը եւ Փաշինեանի քարոզչութեան սնանկութիւնը

Հայաստանի արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանի արձագանքը Նախիջևանի մէջ յունուարին կազմակերպուելիք այսպէս կոչուած «Վերագարձ Արեւմտեան Ատրպէյճան» համագումարին նկատմամբ, հերթական անգամ բացայայտեց Երեւանի ներկայ իշխանութիւններուն վտանգաւոր թուելութիւնը Պաքուէն հնչող յարձակողական եւ ծաւալապաշտական օրակարգերուն դիմաց:

Մինչ Ատրպէյճանի պետական կառույցներու եւ նախագահութեան հովանաւորութեամբ կը կազմակերպուի միջոցառում մը, ուր պիտի քննարկուին Հայաստանի ինքնիշխան տարածքներուն նկատմամբ «վերագարձի հեռանկարներ»-ը, Հայաստանի արտաքին գործոց նախարարը կը սահմանափակէ իր խօսքը ըսելով, թէ այդ «չի տեղաւորուի խաղաղութեան տեսլականին մէջ»: Այսպիսի բառամթերք ոչ միայն թոյլ է, այլ նաեւ քաղաքականապէս անբաւարար, որովհետեւ խօսքը քարոզչական պարզ նախաձեռնութեան մասին չէ, այլ պետական մակարդակով հովանաւորուող ռազմավարական եւ գաղափարական արշաւի մը:

Այսպէս կոչուած «Արեւմտեան Ատրպէյճան» գաղափարախօսութիւնը տարիներէ ի վեր կը ծառայէ որպէս Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան դէմ ուղղուած քաղաքական գործիք: Անիկա կը փորձէ Հայաստանի տարածքը ներկայացնել որպէս «պատմական ատրպէյճանական հող», ինչ որ ուղղակի սպառնալիք է Հայաստանի ինքնիշխանութեան եւ անվտանգութեան համար: Այս պայմաններուն մէջ կիսատ-պոստ դիւանագիտական դժգոհութիւն արտայայտելը աւելի շատ կը նմանի վնասի կառավարումի, քան պետական շահերու պաշտպանութեան:

Առաւել եւս, այս գարգացումը ամբողջովին կը հակասէ Նիկոլ Փաշինեանի քարոզած «խաղաղութեան դարաշրջան»-ի պատկերին: Երբ Ատրպէյճանի պետութիւնը զուգահեռաբար կը կազմակերպէ համագումարներ, որոնք բացայայտօրէն կասկածի տակ կը դնեն Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը, Փաշինեանի խաղաղութեան քարոզչութիւնը պարզապէս կը դառնայ ծիծաղելի: Անհնար է խօսիլ «խաղաղութեան նոր դարաշրջան»-ի մասին, երբ նոյն այդ «գործընկեր» պետութիւնը պետական մակարդակով կը սնուցանէ Հայաստանի նկատմամբ պահանջատիրական եւ յարձակողական օրակարգեր:

Նախիջևանի մէջ կայանալիք այս համագումարը մշակութային կամ ակադեմիական պարզ նախաձեռնութիւն չէ: Անիկա յստակ քաղաքական ուղերձ է՝ ուղղուած թէ՛ հայ հանրութեան, թէ՛ միջազգային դերակատարներուն: Իսկ Երեւանի ներկայ արձագանքը ցոյց կու տայ, որ իշխանութիւնները տակաւին կը շարունակեն այս սպառնալիքները ներկայացնել որպէս երկրորդական երեւոյթներ, փոխանակ զանոնք անուանելու այն, ինչ որ են՝ Հայաստանի դէմ ուղղուած պետական մակարդակի քաղաքական ճնշում եւ գաղափարական նախապատրաստութիւն:

Պարոն Միրզոյեան, այս համագումարը ոչ թէ «չի տեղաւորուի խաղաղութեան տեսլականին մէջ», այլ՝ «չի տեղաւորուի ձեր սնանկ ու մոլորեցնող քարոզչութեան մէջ»:

ՍԵՒԱԿ ՊԷԼԵԱՆ

չէ ստորագրուած: Ատրպէյճանը կը պահանջէ, որ Հայաստանը իր սահմանադրութեանն էւ Անկախութեան հռչակագիրէն հեռացնէ Լեւոնային Ղարաբաղին վերաբերող յղումները: Միեւնոյն ժամանակ Պաքուն իր սահմանադրութեան մէջ կը շարունակէ պահել ձեւակերպումներ, որոնք ակնարկ կը պարունակեն Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջներու:

Բացակայ օղակը՝ Թուրքիան

ԹՐԻՓՓ-ի տնտեսական տրամաբանութիւնը Հայաստանի համար ամբողջական չի կրնար դառնալ, քանի տակաւին հայ-թրքական սահմանը փակ կը մնայ արդէն 33 տարիէ ի վեր: Միրզոյեան յայտարարած է, որ Կարա-Գիւմրի երկաթուղին ԹՐԻՓՓ-ի արեւմտեան առանցքային աւարտակէտն է, ոչ թէ՛ երկրորդական յաւելում: 2026-ի սպրիլին թուրք եւ հայ պաշտօնեաներ հանդիպած են Կարսի մէջ՝ երկաթուղիի վերաբացման աշխատանքային խումբ ստեղծելու նպատակով, սակայն Անգարան տակաւին կը պնդէ, որ յարաբերութիւններու լիարժէք կարգաւորումը կարելի է միայն հայ-ատրպէյճանական խաղաղութեան վերջնական պայմանագիրէն ետք:

Եւրոպայի բացակայութիւնը

ԹՐԻՓՓ-ը հիմնականօրէն երկկողմանի ամերիկեան-հայկական նախագիծ մըն է՝ Ատրպէյճանի մասնակցութեամբ, եւ ոչ՝ բազմակողմանի միջազգային հարթակ: Այս նախագիծը փաստացիօրէն դուրս ձգած է Եւրոպական Միութիւնը, թէեւ վերջինս լուրջ հետաքրքրութիւն ունի Միջին միջանցքի զարգացման նկատմամբ: Եւրոպան Հայաստանին կ'աջակցի առանձին ծրագիրներով, սակայն չի մասնակցիր ԹՐԻՓՓ-ի կառավարման կառուցուածքին:

Իրանի գործօնը

Իրան-Իսրայէլ պատերազմը միաժամանակ թէ՛ կը զօրացնէ նախագիծին աշխարհաքաղաքական կարեւորութիւնը, թէ՛ կը վտանգէ անոր իրականացումը: Հորմուզի նեղուցին անկայունութեան պատճառով Միջին միջանցքի արժէքը աճած է, սակայն Իրանի իրաւունքներն մօտ ամերիկեան ներկայութիւնը աւելի վտանգաւոր դարձած է: Նախագիծին շուրջ նախատեսուած արհեստագիտական բնոյթի այցելութիւնները յետաձգուած են, իսկ ներդրողները կը վերագնահատեն վտանգները:

Եզրակացութիւն. միջանցք՝ առանց հիմքի՞

ԹՐԻՓՓ-ը արդէն որոշ արդիւնքներ տուած է՞ ան ժամանակաւորապէս կանխած է Միւնիքի նկատմամբ ռազմական ճնշումը եւ ստեղծած՝ հայ-ատրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման նախադրեալները: Սակայն նախագիծը տակաւին կը մնայ չափազանց փխրուն հիմքերու վրայ կառուցուած նախաձեռնութիւն մը:

Ինը ամիս ետք Հայաստանի մէջ տակաւին ոչ մէկ մեթոդ շինարարութիւն կատարուած է: Չկայ ստորագրուած խաղաղութեան պայմանագիր, չկայ վերջնական կառավարման համաձայնագիր, լուծուած չէ ռուսական երկաթուղիի հարցը, իսկ սահմանակից շրջանին մէջ պատերազմը կը շարունակուի: Հայաստան կը շարունակէ կրել հիմնական վտանգները՝ տրամադրելով տարածք, ընդունելով ինքնիշխանութեան սահմանափակման վտանգը եւ կախեալ մնալով այնպիսի գործընթացներէ, որոնք ամբողջութեամբ իր վերահսկողութեան տակ չեն:

Հիմնական հարցը կը մնայ նոյնը. արդեօք ասիկա իսկապէս խաղաղութեան խաչմերուկ է, թէ՞ պարզապէս միջանցք մը՝ ուրիշներու բարգաւաճման համար

ՀՐԱՅՐ ՊԱԼԵԱՆ



2եր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼՍԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

*Նոր Յացէ՛լ
Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

PERMIS DE QUÉBEC

Tel: + 1 514-284-7676
Email info@haigtravel.ca

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ ԿԱՄ ՎԱՐԺԵՑՈՒՄ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ (Սփիւռքեան մտածողութիւն մը)

ՄՇԱԿՈՅԹ ՊԱՏՈՒԱՆ ԴԱՆԸ

ԵՒ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՅԱԶԵԻՒՆ ԱՆՀՂՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Մշակոյթը հաւաքականութեան մը «էական միջավայր»ն է, որովհետեւ է ինքնութեան, արմատներու եւ յիշողութեան տարածքը: Քիւրքճեան խորհած է, թէ անոնցմով կը սահմանուի «մարդկային երեւոյթ»ը: Այսպէս խորհած է, նոյն ատեն յիշելով, թէ «այսօրինակ մշակութապաշտ տեսիլք մը», (կ'իմանամ՝ պատմական եւ գոյութեանական հասկացողութիւն մը), ժամանակակից ու արդի աշխարհին կողմէ մերժուած է, որովհետեւ «նախամեծար» համարուած են աւելի «իրապաշտ» գործոններ, ինչպէ՛ս՝ ընկերա-քաղաքականը կամ տնտեսականը: Անոնք գեղչելի չեն, բայց, ըստ իրեն, այն մերժումը՝ մոռացումի ախտանիշ մըն է, որուն «դէմ կ'ելլեն յիշողութեան եւ ինքնութեան պաշտպան այլ ուժեր» (պաշպան «ուժեր»ը՝ իրողութիւններ են): Անոնցմէ են՝ օրինակ արեւմուտքի փոքրամասնական շարժումները, կամ անդր-պետական (նաչելի թէօլէօլեանի եզրով՝ «անդրագային», որուն համաձայն չէ եղած Քիւրքճեան) մշակութային բազմութիւնները՝ Սփիւռքները: Սոյն «ուժեր»ու ծիրի մը մէջ տեղադրած է արեւմտահայ Սփիւռքը, որ յառաջացած է ցեղասպանութենէն: Թէ ինչո՞ւ արեւմտահայ Սփիւռքը միայն, եւ ոչ նաեւ՝ արեւելահայը: Որովհետեւ արեւմտահայ Սփիւռքը «իր պատմական ծնունդով եւ իր կրած մշակոյթի (լեզուի տարբերակով), կը գանազանուի արեւելահայ Սփիւռքէն, որ նոր է, եւ «էպպէս տնտեսական ծագում ունի»: Աճապարեմ ըսելու, որ այս տեսակէտին համար՝ անհրաժեշտ տեսած է աւելցնել, թէ այս գանազանումը «ճշգրիտ է որոշ պայմաններու տակ»: Սակայն յաւելումէն ետք, չէ պարզած, թէ որո՞նք են այն «որոշ պայմաններ»ը զորս ի մտի ունեցած է: Ենթադրելի է, թէ Հայաստանին արտագաղթողներէն ոմանց արեւմտահայ ծագումը նկատի ունեցած է, գուցէ նաեւ՝ անոնց ու այլոց դառն փորձառութիւններն ու բռնութեան կայսրութենէն ճողոպրումը:

Ինք հայ մշակոյթը՝ «իր ակունքներէն իսկ» ճանչցած է իբր բաց մշակոյթ մը, որ ի սկզբանէ ունեցած է «Օտարին հետ հաղորդուելու, համարկուելու» կարողութիւնը: 1915-ի Աղէտն է, որ զայն ենթարկած է «հայապահպանում» տարագով «սնանկ»

գաղափարաբանութեան: Գաղափարաբանութիւն մը՝ որ կը կոտորակէ, կը հիւժեցնէ եւ կը բնաջնջէ: Սփիւռքը տակաւին կը շարունակէ ենթարկուիլ այն գաղափարաբանութեան ժխտական ազդումներուն: Մշակոյթին բացութիւնը որեւէ «փոքր ածու» (ծանօթ է, որ Խորենացի այս պատկերը գործածած է հայութեան համար. Քիւրքճեան ասիկա օգտագործած է՝ նկատի ունենալով որեւէ ցիրուցանեալ ժողովուրդ) ներքնապէս կը զօդէ, կը զօրացնէ...: Մանաւանդ սփիւռքեան հաւաքականութեան մը պարագային:

Հայ մշակոյթը դարեր շարունակ «պայմանաւորած է հայութեան ճաղատմէն» արդէն: Անիկա հայութեան «երկրորդ բնաւորութիւն» մը եղած է: Հակառակ ամէն տեսակի աղէտներուն, անիկա այնքան ներգործօն ազդեցութիւն ունեցած է, որ «պետական կոռուսնէ շատ կանուխ զրկուած» հայութիւնը՝ կանգուն պահած է իր «կրանիթեայ պատուանդան»ին վրայ: Մարդկային կորուստները, մշակութային հարստութիւններու աւերումները եւ «անսրբագրելի բնակչագրական դիմագիրծին աղաւաղումը» Հայաստանին, չեն կրցած վերջակէտ մը դնել մշակոյթի ընթացքին ու մերթ ընդ մերթ՝ թափին: Մշակոյթը օգնած է, որ հայութիւնը փրկուի, նոյնիսկ կիսասփիւռքեան պայմաններուն մէջ, այսինքն՝ նախա-եղեռնեան ցրուածութեան պայմաններուն:

Մշակոյթով պարիլը՝ հայութեան «ագգային գոյատեւման բանալին» է: Ցեղասպանութենէն ետք, արեւմտահայ Սփիւռքին համար մշակութային գոյածեւ իւրացնելը՝ «թանկագին աւանդ» մըն է: Իւրացմամբ՝ հայութիւնը կը վերածուի ազգ-ժողովուրդի: Պետականագրու ժողովուրդ մը պէտք է որ «առաւել ուժգնօրէն» կառչի իր մշակոյթին, որ կրնայ փոխարինել պետութեան դերը: Ափսոսանքով գրած է. «Մեր Սփիւռքը՝ պառակտուած այս միաւորը, չէ փութացած ըմբռնելու այսպիսի ճշմարտութիւն մը, որ սակայն էական է իր վերապրումին համար»:

Սփիւռքը մշակոյթին փրկարար դերը «շատ անորոշ կերպով մը կը զգայ միայն», հակառակ այն ստիպողական կացութեան՝ որ իրմէ կը սպասէ լուրջ ըմբռնումը անոր: Այս հաստատումին համար, Քիւրքճեան ակնարկած է Սփիւռքի «ազէտալիօրէն մերժողական կեցուածքին»՝ հանդէպ համաշխարհային մշակութային արժէքներուն: Այս կեցուածքով՝ Սփիւռքը անելի

մը մէջ կը պահէ ինքզինք: Անիկա ուշացած է, կարելի է աւելցնել՝ որ դեռ կ'ուշանայ, «տեսնելու իր ուղին», որ չէ այլ ինչ՝ քան «կենսական զանցում»ը արեւելեան «գաղափարաբանական կեթոյին», եւ արեւմտեան քաղքենի ապամշակութայնացման: Ինք Սփիւռքի արեւելեան թեւը տեսած է երկշոտ փորձի մը եւ «ձախաւեր բացուածք»ի մը մէջ, իսկ արեւմտեան թեւը՝ մանկավարժական «անդամալուծութեան ու քառսի», որ հայկական ապրող մշակոյթի մը տեղ՝ թիւրիմաց «հայութեան գիտակցութիւն» մը պահպանելու ապաւնիւած է: Պատկերը մտայլ է:

Ի՞նչ ընել: «Պատմական դասեր»ուն Քիւրքճեանի ընթերցումը՝ չէ ուզած այն տպաւորութիւնը ձգել, թէ անոնք ինքնաբերաբար դեղագիրներ կամ երաշխիքներ կը հայթայթեն: Այն դասերը «օգտակար» կ'ըլլան, երբ իրենց «էական նշանակութեան» կը վերածուին: Այն վերածումը՝ պայման է, որ անոնք «օգտակար» ըլլան: «Դասեր»ը կը պահանջեն հաւատարմութիւն եւ ստեղծականութիւն: Հաւատարմութիւն սեփական հաւաքական ինքնութեան, եւ ստեղծականութիւն՝ որ «մնայուն ճիգ» է համարկուելու ներկայ համաշխարհային մշակութային արժէքներուն: Սփիւռքը այս կրկնակ պահանջքին կարեւորութիւնը պէտք է ընդունի, եթէ «չի կամենար արագացնել իր նահանջը», ձգելով՝ որ անիկա դառնայ «գահավէժ անկում» մը:

Իրեն համար, սփիւռքահայ ըլլալը՝ երկմշակութայնօրէն ըլլալ է (վստահ եմ, որ տարակարծիք պիտի չըլլար, եթէ ըսուէր՝ թէ սփիւռքահայ ըլլալը՝ առաւել քան երկմշակութայնօրէն ըլլալ է. կը կարծեմ, որ ասիկա բացատրելու պէտքը չկայ):

Մշակոյթի իր տեսութիւնը՝ սերտօրէն առնչած է լեզուի իր տեսութեան: Լեզուն որեւէ հաւաքականութեան պարագային՝ «ազուցման տեղ»ն է ինքնութեան գիտակցութեան, ու մշակութային «այլազան իրագործումներու», նաեւ՝ բարբերու ամբողջութեան: Ըստ իրեն, առանց «ազուցման տեղ»ին իւրացման՝ ինչ որ կը ժառանգուի պակասաւոր կ'ըլլայ: Ուրեմն՝ ինքնութեան գիտակցութիւնն ալ պակասաւոր կ'ըլլայ... եւ պակասաւորութիւնը դրական խոստումներ չի կրնար տալ: Միայն ու միայն կը տանի բացարձակ այլութեան...:

ԳԱՌՆԻԿ Ա. Ք. Գ. (Ծարուակելի 9)

Մեր պայքարը իր իրական տարողութեամբ

Տարրական տրամաբանութեամբ, Փաշինեանի մտազարութիւնները պէտք է լրջօրէն տաքնապահար ընեն իր կուսակիցները եւ մղեն զիրենք, խստագոյն միջամտութեամբ, կարգի հրաւիրելու գազազած իրենց ընկերը: Նոյն տրամաբանութեամբ, խուճապի մթնոլորտ պէտք է տիրէ Անգարայի, Պաքուի, Արեւմուտքի եւ Իսրայէլի մէջ ի տես Փաշինեանի սանձարձակ պոռթկումներուն... (Ինչպէ՞ս զսպել բաղնիքին մէջ յայտնուած այս անկայունը...): «Յո՞ւ երթանք, Պարոնայք...», պիտի ըլլայ Հաքան Ֆիտանի սաստը ուղղուած՝ իր մշտադիտարկման (monitoring) թիմին պահանջելով, որ առնուին խիստ վճռական քայլեր եւ, առաջին հերթին, «հաթլայն»ի վրայ բերուին Երեւանի իրենց գործակիցները:

Բնական պայմաններու մէջ, այսպէս է, որ պիտի գործէ քաղաքական գործընթացը ի տես Փաշինեանական փողոցին: Այսինքն՝ քարոզարշաւի կոպիտ սխալները անմիջապէս ուղղելու եւ անսաստողը սանձահարելու յստակ դիտաւորութեան մը: Այսինքն թուրքիոյ «վերեւ»ներէն շահող մտրակով՝ «Արթնցուցէ՛ք սա ողորմելին: Ասիկա իր ընտրութիւնը չէ: ՄԵՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Է...»:

Այս բոլորը անշուշտ վարկածային կողմն են այս վերլուծման: Պէտք է, անշուշտ, հարց տալ, թէ արդեօ՞ք կայ նման անհանգստութիւն ընտրապայքարի Փաշինեանական ոլորտին մէջ: Կա՞ն միթէ այդպիսի յարաբերութիւններ Փաշինեանական ճամբարին եւ այս վերջինի արտաքին հովանաւորներուն միջեւ: Հարց տալ մանաւանդ, թէ արդեօ՞ք քաղաքականութեան բնականոն գործօնները դեռ կը գործեն Հայաստանի քաղաքական բեմին վրայ այս օրերուն:

Եթէ կը գործեն, յստակ է մէկ բան: Փաշինեան իր այլանդակ վարքագծով հիանալի գէնք մը դրած է այսօր Ընդդիմութեան ուժերու տրամադրութեան տակ: Զէնք՝ որով Ընդդիմութիւնը կրնայ արագօրէն յեղաշրջել ընտրողներու զօրակցութեան ենթադրական աղիւսակը եւ փոխել իրավիճակը յօգուտ Ընդդիմութեան: Այդ բանին փաստը – եթէ բախտաւոր ենք – պիտի տեսնենք յաջորդող օրերու խմորումներուն մէջ: Մինչ այդ ընդդիմադիր ճակատը պէտք է անյապաղ ջրբաժան յառաջացնէ ընտրական դաշտին մէջ հուժկու ազդակի վերածելով Փաշինեանի անհաւատալի արտաբերումները ընտրարշաւի ճամբու երկայնքին: Տոյց տալ ընտրողին, որ Փաշինեան կը գործէ մեր ազգային գերագոյն շահերուն դէմ եւ կը գործէ անկապ ու անկշիռ թոխչքներով՝ ընտրութիւններու բեմը վերածելով եղբրազաւեշտի:

Բայց ամենէն կարեւորը՝ պէտք է հարց տալ, թէ իսկապէս ի՞նչ պատկերացում ունի թշնամին այսօր ՀՀ հասարակութեան քաղաքական ողնայարին մասին: Ի՞նչ ակնկալութիւն կամ ի՞նչ վախ, թէ ի՞նչ կրնայ ընել ՀՀ քաղաքացին տեսնելով հայ անկախ պետականութեան շարունակական գահավէժը ի ձեռս Փաշինեանական համակարգին: ՀՀ ընտրազանգուածը արդեօ՞ք պիտի կանգնի ոտքի – ըսել կ'ուզեմ՝ տարերայնօրէն – Փաշինեանով դրսեւորուող այս ազգային ողբեր–

գութեան դէմ եւ իր ճակատագրի սանձերը վերջապէս առնէ իր ձեռքերուն մէջ՝ դաւաճանական այս ժառանգութիւնը միանգամընդմիջտ դուրս շարտելով երկրի կեանքէն: Արդեօք ի՞նչ պիտի ընեն կամ ի՞նչ ատակ են ընելու – յեղափոխական յայտնի երգին բառերով – «սա խռովեալ հայերը», ըստ Անգարայի եւ Պաքուի ռազմավարական հաշուարկներուն: Արդեօ՞ք ողջ է Սարգսրապատի ջիղը...

Ես կը կարծեմ, թէ այս կէտին վրայ գործ ունինք շատ ճակատագրական նրբութեան մը հետ:

Փաշինեանի հովանաւորները երբեք խուճապահար չեն այսօր, քանի որ անոնք գործը երբեք իսկապէս չեն յանձնած Փաշինեանին: Պէտք է ակնկալել, որ անոնք արդէն վաղուց հաստատած են իրենց մեքենականութիւնները ընտրական դաշտէն ներս ՀՀ քուէն ապակողմնորոշելու եւ Փաշինեանի յանցագործ իշխանութեան վերարտադրութիւնը ապահովելու: Փաշինեանի ելոյթները ընդհանուր յայտարար մը ունին: Անոնք բացայայտօրէն կ'արհամարհեն երկրի քուէն: Անոնք չեն վախնար քաղաքացին անարգելի: Անոնք համոզուած են, որ քաղաքացին շուարած է, տկար, քաղաքականօրէն պարտուած եւ անատակ՝ իր արժանապատուութեան տէր կանգնելու: Փաշինեանի ելոյթները օրկանական մասն իսկ են ՀՀ քուէն բարոյալքելու կոչուած թշնամիի ընդհանուր ծրագրին: Անոնք լիովին համահունչ են թշնամիի ռազմավարութեան նորմերուն: Ի տարբերութիւն վերեւ յիշուած վարկածին, Փաշինեան եւ իր հովանաւորները անզանազանելի են իրարմէ: Եւ անոնք միասնաբար կը սոնքան իրենց գոռոզութեամբ հանդէպ մեր ժողովուրդին: ԱՆՈՆՔ ՀԱՄՈՋՈՒԱԾ ԵՆ, ՈՐ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՐԴԵՆ ԴԱԴՐԱԾ Է ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼԷ ՈՐՊԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱԻԱՔԱԿԱՆ ԽՂՃՄՏԱՆՔ: ՈՐՊԷՍ ՀԱԻԱՔԱԿԱՆ ՈՒԺ... Հետեւաբար կարելի է անվախօրէն քուրջի կտորի վերածել զինք և դեռ շահիլ ընտրութիւնը:

Եւ հոս է, որ Փաշինեան եւ իր տէրերը չարաչար կը սխալին: ԻՐԵՆՅ ԱՅՍ ԹՈՒՆԱԻՈՐ ԳՈՌՈՋՈՒԹԻՒՆ Է, ՈՐ ԶԱՐԴՈՒՓՇՈՒՐ ՊԻՏԻ ԸՆԷ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՅՈՒՆԻՍԻ 7-ին... Այս վճռական – ԱՅՍ ՊԱՏՄԱԿԱՆ – առճակատումն է, որ տեղի պիտի ունենայ շուտով: Մեր ժողովուրդը լոկ Փաշինեանի եւ իր վիշիական ջոլիբին դէմ չէ, որ ելած է կոռուի: ԱՆ ԵՒԱԾ Է ՊԱՅՔԱՐԻ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՀՈՎԱՆԱԻՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԳԵՄ: ԵՒ ԵԿԱԾ Է ՎԵՐՁՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ ՏԱԼՈՒ ՀԱՅ ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԼԻՆԵԼԻՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԻՆ: Սարգսրապատի ջիղը... Այո, ողջ է ան: Ողջ է առողջ եւ պատրաստ՝ դիմագրաւելու կեանքի մեծ մարտահրաւէրները այսօր, վաղը, յաւիտեանս: Մեր պայքարը ամէն տեղ է: Աշխարհակարգի բոլոր՝ ճակատներուն վրայ: Եւ ան կանգ պիտի չառնէ Յուճիսի 7-ին:

ԿԱՐՈ ԱՐՄԵՆԵԱՆ

While in Vatican, Aram I raised concerns over Azerbaijan-backed conference held at Holy See

VATICAN CITY — His Holiness, Catholicos Aram I raised concerns during a meeting at the Vatican over the one-sided approaches toward Artsakh and the Armenian Church displayed during a conference organized by Azerbaijan nearly a year ago at the Pontifical Gregorian University.

According to the press service of the Catholicosate of the Great House of Cilicia, Aram I met with Cardinal George Jacob Koovakad, who oversees inter-religious relations, during his visit to the Vatican. The meeting focused on peaceful coexistence and cooperation among religions.

During the discussions, Aram I addressed the anti-Armenian positions advanced during the Azerbaijan-organized conference, stressing the importance of confronting distor-

tions targeting Artsakh and the Armenian Church.

The Catholicosate stated that Cardinal Koovakad provided explanations regarding the Vatican's dialogue with Azerbaijan and emphasized that his department would continue the necessary work concerning the issues raised by the Catholicos.

The two sides also agreed on the need to broaden the agenda of discussions. At the conclusion of the meeting, Aram I presented Cardinal Koovakad with a commemorative gift depicting the Virgin Mary.

The meeting followed earlier discussions held in Kazakhstan in the summer of 2025, when Aram I had likewise raised concerns regarding the conference held at the Pontifical Gregorian University.

Vana Nazarian appointed to Vanier College Board of Governors

MONTREAL — Vanier College has announced the election of Vana Nazarian as a socio-economic member of its Board of Governors for a three-year term.

Nazarian, who has served as a Montreal municipal councillor since 2021 and was re-elected in 2025, oversees international outreach and city attractiveness initiatives while contributing to the city's economic development efforts.

Holding both a master's degree in art history and an MBA, Nazarian brings experience in governance, financial oversight, accountability, and organizational leadership. Vanier College noted that her professional and political background makes her a strong addition to the institution's governing body.

In a short statement shared on social media, Nazarian said education plays "a vital role in shaping vibrant, inclusive and forward-looking communities" and expressed gratitude for the appointment by Québec's Ministry of Higher Education. She added that she looks forward to contributing to the College's mission while supporting student success, innovation, and stronger ties between education, the community, and the economy.

The Board of Governors serves as the governing body of the College and is composed of 19 members representing both the internal and external community. The College welcomed Nazarian to the Board and thanked her for her commitment to the institution's mission.

Escalating rhetoric ahead of Armenia's June parliamentary elections

YEREVAN — As Armenia approaches its pivotal June 7 parliamentary elections, the country's political environment has grown increasingly volatile, marked by escalating rhetoric, institutional pressure against opposition figures and deepening societal polarization.

Prime Minister Nikol Pashinyan, who rose to power in 2018 on promises of democratic reform, now faces mounting criticism over an increasingly authoritarian political style amid national polarization following the 2020 war and the loss of Nagorno-Karabagh.

One of the defining moments of the campaign unfolded during a tense confrontation in Yerevan's Arabkir district be-

tween Nikol Pashinyan and Dr. Arpine Soghoian, the sister of missing military doctor Lt. Col. Hrant Papikyan, who is missing since the 2020 war.

Approaching the prime minister during a public appearance, Soghoian accused him directly of destroying both the country and an entire generation of Armenians.

Rather than de-escalate the exchange, Pashinyan responded angrily, raising his voice and grabbing Soghoian's arm as security and supporters surrounded them. The prime minister then launched into an extraordinary tirade against Armenia's opposition leadership, threatening to imprison, politically "destroy" and even kill them after the elections.

Roman Church inducts Saint Nerses Shnorhali into its Martyrology calendar

